

927



+

87

ԸՆԿԵՐ ՄՈԼՈՏՈՎԻ ՃԱՌԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ,
ԿՐԵՄԼՈՒՄ

9(47.925)

Մ-86

ՅԱՊՈՒՍՏՈՒՄ • 1936

31 AUG 2007

15 SEP 2011

ԶԿԴ. 565)

Պրոլետարներ բոլոր յեթկիցների, միացնք

Մ-86

1502
396/16

411/4

Ընկեր ՄՈԼՈՏՈՎԻ ՃԱՌԵ
ԽՈՐՀՈՂԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԱԿՈՎՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ,
ԿՐԵՄԼՈՒՄ

1935 թ. դեկտեմբերի 30-ին



04 JUL 2013

13024

Речь тов. В. М. МОЛОТОВА

на приеме делегации трудящихся
Советской Армении 30 декабря 1935 г.

Армпартнадат, Эривань

9/4828 - 91

Ընկերնե՛ր, թույլ տվեք ձեզ դիմել ձեր
մայրենի լեզվով .—«Ընկերնե՛ր», —մենք ու-
րախ ենք տեսնելով այստեղ, կրեմլում,
Խորհրդային Հայաստանի աշխատավորների
պատվիրակներին: Մենք ջերմագին վողջու-
նում ենք ձեզ, ընկերնե՛ր, վորպես Խորհր-
դային Հայաստանի, բանվորների ու բան-
վորուհիների արտ աշխատամքի Հայաս-
տանի, կոլտնտեսությունների Հայաստանի,
սոցիալիստական հիմքի վրա ազգային վե-
րածնունդ ապրող Հայաստանի ներկայա-
ցուցիչների:

Վերջապես մենք տեսնում ենք Հայաստա-
նի ազգային կուլտուրայի խակական աճու-
մը, Հայաստանի, վորը Խորհրդային Միու-

թյան բոլոր ժողովուրդների հետ միասին
Հնարավորություն և ստացել կառուցելու
իր սոցիալիստական կուլտուրան:

Մենք հիշում ենք, թե վորքան չարիքներ
ու գերախոսություններ են բաժին ընկել հայ
ժողովողին, վորը մի չարք դարերի ըն-
թացքում գտնվում եր ոտար լծի տակ:
Յերկար տարիների շնթացքում, համարյա-
մի ամբողջ դար, ընդհուպ մինչև խոր-
հուրդների իշխանության հաղթանակը,
տաղանդավոր հայ ժողովուրդը դատիքում
եր ոռասական ցարիքի գարշապարի տակ:
Ծանր հիշողությունները ցարական ինքնա-
կալության ճնշման մասին, այն ճնշման,
վորին յենթարկվում եր հայ ժողովուրդը
ոռուսական կալվածատերերի, կապիտալիստ-
ների, գեներալների, տերտերների ու չի-
նովնիկների կողմից, դեռ յերկար ժա-
մանակ կապրեն Հայաստանի աշխատա-
վորների մեջ: Հայ հարուստների միջից
զերած առանձին բախտավորներն
եյին միայն լողում կյանքի մակերեսը՝
խոչոր կապիտալիստներ, կալվածատերեր

ու բանկիրներ դառնալով: Այդ պարունակը,
իրենց քսակը լցնելով և կառչելով ցարա-
կան իշխանություններին, վատ չեյին ապ-
րում և իրենց հերթին ունում եյին վո-
տիկանությանը, սև-հարյուրյակային հո-
գեվորականությանն ու ցարական ռեժիմի
ամեն տեսակ պարունայք-պետերին՝ խեղդե-
լու Հայաստանի աշխատավորությանը:

Մենք դիտենք, վոր հայ ժողովրդի մեջ
վաղուց ի վեր յերազներ եյին հասունանում
և հույսեր եյին ապրում սեփական ազա-
տագրման նկատմամբ: Հայ ժողովրդի շատ
հեղափոխական մարտիկներ դոհել են ի-
րենց, իրենց կյանքն են տվել՝ իրենց ժո-
ղովրդին աղջայնողեն-աղատ, յերջանիկ
կյանք ձեռք բերելու համար:

Մենք դիտենք նաև, վոր հայ ժողովրդի
աղջային ազատագրման գաղափարը փոր-
ձում եյին իրենց շահերի համար ոգտա-
գործել հայ բուրժուական նացիոնալիստնե-
րը՝ դաշնակները, վորոնք ոռուսական մեն-
շեկների ու եսերների, ինչպես նաև մյուս
աղջությունների մենչև կիների ու եսերների

նման դաշլածամբական գեր խաղացին իրենց
ժողովրդի հանդեպ : Բայց դաշնակները
դրանով հենց իսայոտառակության ու կործան-
ման դատապարտեցին իրենց , բաժանելով՝
ինչպես այդ ցույց տվեց պրոլետարական
հեղափոխության փորձը՝ բուրժուազիայի
բոլոր ու ամեն տեսակ գործարակաների ճա-
կատագիրը , լինելին դրանք ոռուական ,
հայկական , վրացական , թուրքական , ու-
կրաինական կամ վորևե այլ բուրժուազիա :
Հենց այդ և նրանց ճանապարհը : Ո՞ւմ հա-
մար այժմ պարզ չե , վոր նա , ով դեռ իրեն
դաշնակ և անվանում , չի կարող վորեն
այլ դեր խաղալ , բացի Խորհրդացին Հա-
յաստանի թշնամու դերից , Խորհրդացին
Հայաստանի , վորը վոտք ե դրել պահծալի
ազգացին վերածնունդի ուղին : Ո՞ւմ համար
այժմ պարզ չե , վոր դաշնակը մեր տնից
ավելով դեն չպատված սպիտակ գվարդիա-
կանության և դրա հետ միասին արտասահ-
մանյան բուրժուազիայի խղճուկ գործա-
կալն ե :

Այդ նացիոնալիստների , ինչպես և այլ

աղջերի բուրժուական նացիոնալիստների
գլխավոր սխալն այն եր , վոր նրանք չհաս-
կացան , թե վորն և իրոք ազգային վերա-
ծնունդի ու աշխատավորների կյանքի իրա-
կան բարելավման ճիշտ ճանապարհը :
Նրանք , ինչպես և մեր յերկրի իսկական
հեղափոխականները , ճիշտ եյին ասում , թե
ցարական Ռուսաստանը ժողովուրդների
բանա ե : Նրանք արդարացիորեն անիծում
եյին ցարական Ռուսաստանն այն ճնշման ,
բոնության ու ստրկության համար , վորին
ցարիզմը դատապարտում եր բոլոր ազ-
գությունների և առանձնաւպես վոչ ուս
ազգության աշխատավորներին : Հրով ու
սրով նվաճելով այսպես կոչված «ազգային
ծայրամասերը» , ցարիզմը ձգտում եր
ստրկացված ժողովուրդներին պահել սար-
սափի տակ , նորանոր բանությունների մըշ-
տական սպառնալիքի տակ , արհեստականո-
րեն ազգամիջան թշնամանք հրահրելով
հոգուտ իր տիրապետության ամբացման :

Սակայն դաշնակները , ինչպես և մյուս
ազգերի բուրժուական նացիոնալիստները ,

չհասկացան գլխավորը : Նրանք չհասկացան
այն, վոր Ռուսաստանում արդեն անցյալ
դարի վերջերին առաջ յեկալ բանվոր դա-
սակարգը, վորը կոչված եր վերջ տալու
վոչ միայն ցարիզմին, այլև կալմածատե-
րերի և կապիտալիտների ամեն մի իշխա-
նության և վորն իր ազատադրության խըն-
դիրը տեսնում եր վոչ թե ուրիշ ժողո-
վուրդներին ճնշելու մեջ, այլ բոլոր ազգե-
րի աշխատավորների բարեկամության մեջ,
և նրանց ընդհանուր հեղափոխական պայ-
քարի մեջ՝ վոչ միայն ընդդեմ ցարիզմի,
այլև ընդդեմ կապիտալի իշխանության՝
ինչ կերպարանքով ել վոր նա լինի : Նրանք
չհասկացան այն, վոր արդեն ճին Ռուսաս-
տանի ընդերքում ծնվել եր նոր՝ հեղափո-
խական Ռուսաստանը, վոր չնայած և հա-
կառակ Ռուսաստանի ցարիզմին՝ առնում եր
և իր թեհրը պարզում ռուսական հեղափո-
խական բանվոր դասակարգը, վորն իր
մարտական շարքերն եր կռում՝ առանց ազ-
գությունների խորության բոլոր աշխատա-
վորների լիակատար՝ ազատագրության հա-

մար մղվող պայքարի դրուի տակ : Վորակեա
ի ծնե կույրեր՝ նրանք չնկատեցին նույնիսկ
այն, վոր արդեն անցյալ դարում ռուսա-
կան բանվոր դասակարգի գլուխ կանգնեց
ձնչված ժողովուրդների և բոլոր աշխա-
տավորների մեծ առաջնորդը, հեղափոխա-
կան բանվորների մեծ առաջնորդը—Լենինը
(բուռն ծափահարությաններ . բացական-
չություններ՝ «Կեցք» անպարտելի, ամե-
նուրեք հաղթանակող լենինիզմը, ուռա՛,
ընկերնե՛ր» : Բուռն ծափահարությաններ :
Բացականչություններ՝ «Ուռա») :

Լենինը, վորի անունը գարձավ բոլոր ազ-
գությունների բանվոր դասակարգի և աշ-
խատավորների պայքարի հաղթական դրուչ
հանուն իրենց ազատագրման, հանուն իրենց
հաղթանակի՝ ընդդեմ կապիտալի և ընդդեմ
ժողովուրդների կեղեքիների, Լենինը—բոլ-
չեկցիան կուսակցության առաջնորդը, վոչ
միայն մատնանշեց պրոլետարական հեղա-
փոխության ուղին, այլև տարավ մեղ գեղի
դրա հաղթանակը, դեպի հեղափոխություն,
վորի պտուղները մենք այժմ սկսում ենք

այնքան առատորեն վայելել։ Լենինի ուժն
այն է, վորնա կարողացավ բոլշևիզմի դրոշի
տակ համախմբել մեր ամբողջ յերկրի լավա-
գույն հեղափոխական ուժերը, և միայն դրա
հետեւանքով Խորհրդային Միության աշխա-
տավորները հաղթականորեն սոցիալիզմ են
կառուցում Լենինի դործի մեծ չարունակո-
ղի գլխավորությամբ, ընկ. Ստալինի պար-
խավորությամբ (Բուռն ծափահարություն-
ներ։ «Ուռա»-ներ. բոլորը վարքի յեն
կանգնում և ովացիա սարքում ի պատիվ
ընկ. Ստալինի։ Բացականչություն՝ «Կեցցե
մեր հարազատ ընկեր Ստալինը, ուռա»)։

Այդ, ինչպես և ուրիշ չառ բան իրենց
կուրության պատճառով չնկատեցին բնուր-
ժուական նացիստականները, սակայն այդ
չխանգարեց մեզ ընթանալ Լենինի կուսակ-
ցության դրոշի տակ, ընկ. Ստալինի կեն-
դանի, ամենորյա ղեկավարությամբ բան-
վոր դասակարգի առաջին նվաճումներից
անցնել նորանոր հաղթանակների (Բուռն
ծափահարություններ։ Բացականչություն-
ներ՝ «Կեցցե՛ ընկեր Ստալինը, կեցցե՛ մեր

յեր լորի սոցիալիզմը՝ հայրածակների կազ-
մակերպիչ քանիագին ընկ. Ստալին»։
«Ուռա» ընկեր Ստալինի լավագույն զինա-
կիցներ՝ ընկերներ Մոլոտովին և Վորոշի-
լովին)։

Միայն նորերս Խորհրդային Հայաստանը
տոնեց իր փառապանձ 15-ամյա հորելյանը,
իսկ նրա ղեկավարներ՝ ընկերներ Խանջյա-
նը և Գուլյանը Հայաստանի տնտեսական
շնորարության բնագավառում ձեռք բե-
րած նշանակալից հաջողությունների կա-
պակցությամբ պարզեատրվեցին Խորհր-
դային Միության բարձր պարզեով—կե-
նինի շքանշանով (Բուռն ծափահարու-
թյուններ, վողզույնի բացականչություններ
հայերեն լեզվով)։

Այժմ Անդրկովկասի բոլոր հանրապետու-
թյունների վրաստանի, Ադրբեջանի և
Հայաստանի—ղեկավարները սպարզեատըր-
ված են Լենինի շքանշանով, Անդրկովկա-
սյան բոլոր հանրապետությունները դարձան
շքանշանակիր (Ծափահարություններ։ Բա-
ցականչություններ՝

»:

Անդրկովկասի Հանրապետությունները
բացառիկ գեր են խաղացել մեր յերկրի
հեղափոխական շարժման մեջ։ Մենք պար-
ծենում ենք այն բանով, վոր նրանք ներ-
կայումն նույնպես ընթանում են Խորհրդա-
յին Միության առաջավոր Հանրապետու-
թյունների շարքում։ Ո՞ւմ հայտնի չե, վոր
Անդրկովկասը քիչ ականավոր դործիչներ
չե տվիլ և տալիս ե Խորհրդային Միու-
թյանը, դործիչներ, վորոնց անունները
լայնորեն հայտնի յեն և մոտ են մեր յերկրի
աշխատավորների ամբողջ մասսային։ Բա-
վական ե ասել, վոր Խորհրդային Միու-
թյան և մեր մեծ կուսակցության ըավա-
գույն դեկապարների թվում մենք ունենք
այնպիսի ընկերներ, ինչպիսիք են Կենտրո-
նական Կոմիտեյի Քաղբյուրոյի անդամներ
ընկեր Որջոնիկիձեն և ընկեր Միկոյանը
(Բուռն ծափեր։ Բոլորը զոտքի յեն կանգ-
նում։ Բացականչություններ՝ «Կեցցե ըն-
կեր Որջոնիկիձեն», «ընկեր Միկոյանին

առաջ»։ Հայերեն բացականչություններ)։

Մենք չենք կասկածում, վոր մանավանդ
ներկայումս, յերբ Հայաստանը և Անդր-

կովկասի մյուս Հանրապետությունները
հանդիսանում են բանվորների և բանվո-
րուհիների ազատ աշխատանքի Հանրա-
պետություններ, կոլտնտեսությունների
հանրապետություններ, ազգային վերա-
ծնունդի և աճող սոցիալիստական կուլտու-
րայի հանրապետություններ, ներկայումս
ել ավելի արագ կամեն Հայաստանի,
Վրաստանի և Ադրբեյջանի ժողովուրդների
նորանոր աչքի ընկնող ուժեր։

Ցանկանք ուրեմն Հայաստանի ընկերնե-
րին, վոր նրանց առաջին խոչըր հաջողու-
թյունները Հայաստանի աշխատավորների
ամբողջ մասսային վոգեշնչեն հետագա-
ղայքարի և հետագա հաջողությունների
ու հաղթանակների՝ հանուն աշխատավոր-
ների լավագույն, բախտավոր կյանքի
(Բուռն ծափեր։ Բափահարություններ։ Ուռաներ։
Հայերեն բացականչություններ)։

Մենք հասանք այն բանին, վոր բազմազ-

գի Անդրկովկասում, վորտեղ յերկար ժամանակա ընթացքում կատաղի կոխվ երտեղի ունենում տարբեր ազգությունների աշխատավորների միջև, —մի կոխվ, վորն ամեն կերպ բորբոքում էյին կապիտալիստները և ցարական սպասավորները, վորների այդ կոխվը վերջնականապես վերացել ե և վոր այդ կովի փոխարեն ծաղկում ե Անդրկովկասի բոլոր աշխատավորների համերաշխ կյանքը (Բուռն ծափահարություններ: Բացականչություններ՝ «Ճիշտ ե»: «Ուոա՛», «Կեցցե՛ Անդրկովկասյան ֆերերացիան, վորախ ժողովուրդների ինտերնացիոնալ գոդման և համագործակցության լավագույն որինակ»: «Ուոա՛»: Հայերեն բացականչություններ):

Կեցցե՛ն Անդրկովկասի հանրատպետությունների աշխատավորները: Կեցցե՛ն Հայաստանի աշխատավորները: (Ընկ. Մոլոտովն իր վերջին խօսքերն արտասանում ե հայերեն: Բուռն ովացիա: Յոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ՝

«Ընկեր Մոլոտովին՝ ուոա»: Հայերեն բացականչություններ):

Ընկերնե՛ր, ի վերջո յես պետք ե հաղորդեմ ձեզ այստեղ ներկա յեղող ընկերների կարծիքը, վոր մենք բոլորս պաշտպանում ենք ընկ. Ստալինի առաջարկը, վորուեազի Խորհրդային Միության բարձրագույն պարզեցնաշան տրվի Խորհրդային Հայաստանից մեղ մոտ յեկած լավագույն ընկերներին (Բուռն ծափահարություններ: Բացականչություններ՝ «Ուոա՛»: «Կեցցե՛ Ժողովուրդների բարեկամ ընկեր Ստալինը, ուոա՛», «Կեցցեն Քաղբյուրոյի անդամները, ուոա՛», «Զերմ վողջույն ընկեր Ստալինին, ուոա՛», «Կեցցե՛ Կարմիր բանակի դեկավարընկեր Վորոշիլովը, ուոա՛»):



Խմբ. Հ. Գասպարյան, թարգմ. Հ. Թուլշյան, սրբագրէն
Ա. Տ.-Մկրտչյան

Դլավլիտի լիազոր № 1063, հրատ. № 367,
պատվեր № 125, տիրաժ 4000, ինդիքս ^{Ա-80} ՓԿ

Հանձնված ե արտադրության 28/III 1936 թ.
Ստորագրված ե տպագրության 3/IV 1936 թ.

ԳԻՆԸ 10 ե.

Հայկուսեասի տպարան, Յերևան, Ալիսիվերյան № 27

ՀՀ Ազգային գրադարան



NL0393882

326

13024

ԳՐԱՎԸ 10 Ա.



Речь тов. В. М. МОЛОТОВА
на приеме делегации трудящихся
Советской Армении 30 декабря 1935 г.

Армпартиздат, Эривань